Նոյն գաւառում հարանքաւորներն երբ դիմում են դէպի աղջկայ տունը, վերջինիս հայրն իւր հիւրերով դիմաւորում է սրանց։ «Մինն էլ մի երկար մաշալա ձեռքին առաջնորդում է նրանց։ Այս տեսնելով, մակարներն արձակում են իրենց հրացանները այդ մաշալայի վրայ և ուռա բղաւում» [1])։

Նոյնպիսի հրացանաձգութիւն տեղի է ունենում, ինչպէս վերը տեսանք, Զէյթունում, երբ աղջկան տանում են հօր տանից։

Ընդհանրապէս շատ ու շատ տեղերում հրացանաձգութիւնը մակարների կողմից անընդհատ տեղի է ունենում հարսանիքի ամբողջ ընթացքում, մանաւանդ երբ աղջկան ուղեկցում են դէպի եկեղեցին և ապա փեսայի տունը։ Առաջի հայեացքից կարելի էր ենթադրել, որ հրացան են ձգում զուարճութիւնից ու բաւականութիւնից։ Սակայն այս սովորութիւնն, ինչպէս և շատ նման սովորութիւնները, եթէ քննենք աւելի խորը, կըզտնենք, որ դա ուրիշ ոչինչ է, եթէ ոչ, հին ժամանակներում տեղի ունեցող առևանգման հետևող երևոյթներից մէկը։ Չէ՞ որ առևանգումն առանց կռուի ու արիւնհեղութեան չէր անցնում. հետևապէս այդ մեր ժամանակակից հրացանաձգութեան վրայ պէտք է նայել իբրև մի լոկ, կեղծեալ պաշտպանողական միջոցի վրայ, որ փեսայի ընկերները ձեռք են առնում իրենց կարծեցեալ հալածողների՝ հարանացուի ազգականների դէմ։ Իսկ այժմս այդ հրացանաձգութիւնը, նախկին ժամանակներից մնացած զէնքով դիմադրելու սովորութիւնը՝ կորցրել է իւր հիմնական դաղափարը և դարձել է մի զուարճութիւն, մի բաւականութիւն, որ մի առանձին շուք է տալիս հարսանիքին։

Թշնամական (գոնէ առևանգման սկզբներում առաջացած) յարաբերութիւնների հետքերը կարելի է նկատել նաև հետևեալ ուշագրաւ սովորութեան մէջ, որ գրեթէ բոլոր հայոց մէջ գոյութիւն ունի։ Աղջկայ ծնողները, նը-

[1]) Ibid.

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան